

# ՇԻՆՄԵՆՆԵԱ ՄԱՅՐ ԱՔՈՌՆ

ՄԱՅՐ ԱՔՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,  
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Օրերս Ադրբեջանի իշխանությունները՝ Սի դեմն Մշակույթի նախարարի, հանդես են եկել հերթական հակահայկական նախաձեռնությամբ:

Համաձայն վերջինիս հայտարարության՝ Ադրբեջանում ձեռնարկվել է տեղի եւ արտերկրյա մասնագետներից կազմված «Ադվանսական պատմության եւ ճարտարապետության մասնագետների աշխատանքային խումբ», որի նպատակն է, այսպես կոչված, ադվանսական կրոնական տանարներից հեռացնել «հայերի թողած կեղծ հետքերը»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է ադրբեջանական իշխանությունների սույն նախաձեռնությունը եւ այն որակում որպես հակամարդկային ու հակաքաղաքակրթական գործողություն՝ Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովրդի նկատմամբ շարունակական թշնամանքի ու ատելության ընդգծված դրսևորումներով:

Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի քրիստոնեական սրբավայրերի հայկական ինքնությունը գիտականորեն հաստատված իրողություն է եւ չի կարող վիճարկման առարկա դառնալ խեղամիտ ու առարկայական մտածողության շրջանակներում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դիմում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ ներգրավված բոլոր երկրներին, առաջին հերթին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետություններին, քույր Եկեղեցիներին ու կրոնական կառույցներին, միջազգային մասնագիտացված կազմակերպություններին՝ խստագույնս արձագանքելու Ադրբեջանի կողմից իրականացվող մշակութային եղեռնագործության անլսաբույց այս փաստին՝ կասեցնելու եւ կանխելու համար վանդալիզմի այս ու նմանօրինակ դրսևորումները:

### Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց ԱՄՆ

Փետրվարի 1-ին Ն. Ս. Ս. Ս. Ս. Քարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Միացյալ Նահանգներում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելով Մայր Աթոռի կողմից իրականացվող ծրագրերը:

## Տյառնընդառաջը Մայր Աթոռում



Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Սուրբ Գայանե վանքում մատուցվեց սուրբ Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կենտրոնի տնօրեն Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Իր քարոզում հայր սուրբը, անդրադարձալով տոնի խորհրդին, մասնավորաբար կարեւորեց հույսի խորհուրդը, որով Սիմեոն Ծերունին երեք հարյուր եւ ավելի տարի սպասում էր Փրկչին տեսնելուն՝ հորդորելով հավատացյալներին նույն հույսով իրենց հայացքներն անշեղորեն ուղղել առ Աստված:

Աղոթք վերառաքելով առ Աստված՝ հայր Գարեգինը մաղթեց հավատավոր ժողովրդին, որ Սիմեոն Ծերունու հույսը մարդկանց սրտերում պտղաբերի, մշտապես լինեն խաղաղության մեջ եւ մի օր երանությունն ունենան ասելու՝ «...ին այժերը տեսան Քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ» (Ղուկ. Բ 30-31):

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Տյառնընդառաջի տոնը, որը խորհրդանշում է 40-օրյա մանուկ Հիսուսի ընծայումը տաճարին:

Բերկրառատ տոնի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան: Ն. Ս. Ս. Ս. Քարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Սուրբ Գայանե վանքում Մայր Աթոռի միաբանության մասնակցությամբ կատարվեց երեկոյան ժամերգություն:

Հավարտ ժամերգության, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի, տեղի ունեցավ նախատոնակ, ապա կատարվեց նաեւ տարվա առաջին Անդաստանի արարողությունը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը:

Արարողությունից հետո եկեղեցականաց թափորն ուղղվեց դեպի Մայր Աթոռի միաբանական շենքի շրջափակ, ուր, ներկայությամբ բազում հավատացյալ հայորդիների, ձեռամբ Մուշեղ սրբազանի, վառվեց Տյառնընդառաջի խարոյկը, որի շուրջ համախմբված Գետրոյան հոգեւոր ճեմարանի



սաները հանդես եկան հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով:

Տյառնընդառաջի տոնը տարիներ առաջ Ն. Ս. Ս. Ս. Քարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակվել է որպես Նորապսակների օրհնության օր:

Փետրվարի 14-ին Ն. Ս. Ս. Ս. Քարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ

Հավարտ սուրբ Պատարագի, հանդիսապետությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի, կատարվեց նորապսակ զուգեթի օրհնության կարգ:

Լրատվական նյութերը՝  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի  
տեղեկատվական համակարգի





# ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ – 155



Դումանի 150-ամյակին նվիրված նամականիշ, Արցախ, 2017

## Սկիզբը՝ թիվ 2

Դումանը մշակույթ է ինքնապաշտպանության ծրագիր. 1) ստեղծել ինքնապաշտպանական բանակ, 2) հստակեցնել բանակի կառուցվածքը, 3) մշակել եւ կենսագործել մարտավարություն: Բանակի շարքեր պետք է մտնեին միայն կամավորներ, ազգի նվիրյալներ:

Դումանի հրամանատարությամբ կազմակերպված ինքնապաշտպանական կռիվները բերեցին այն եզրակացության, որ հայության փրկության եւ գոյատևման միակ հուսալի եւ կենսունակ միջոցը զինված, ուժեղ ինքնապաշտպանությունն է:

Դումանի կարգադրության շնորհիվ Բաքվի, Երեւանի, Թիֆլիսի հայ բնակչությունն ունեցավ սեփական ինքնապաշտպանության զինված ուժեր, որոնք պիտի ծառայեցվեին շատ մեծ զոհությամբ: Գործում էր նաեւ սեփական ազգային դատարանը («պետության մեջ պետություն»), որն անողջ էր նաեւ հայերի հանդեպ:

Շայրահեղ լարված աշխատանքը քայքայել էր Դումանի առողջությունը: Նա որոշում է ժամանակավորապես թողնել հրամանատարությունն ու բուժվել: Շրջաբերակաճով Դումանը դիմում է հայությանը, մասնավորապես՝ ինքնապաշտպանության մասնակիցներին, առաջնորդվելը կապահովելը հայ ժողովրդի ֆիզիկական ապահովությունը: 1905 թ. դեկտեմբերին եւ 1906 թ. հունվարին նա մասնակցում է Հայ հեղափոխական դաշնակցության՝ Երեւանի կենտրոնական կոմիտեի շրջանային ժողովին, հանդես գալիս Երեւանի ու Ջանգեզուրի ինքնապաշտպանության վիճակի ամրապնդելու առաջարկություններով:

Ցարական իշխանությունների հետապնդումից խուսափելով՝ Դումանը որոշ ժամա-

նակ անլեզալ ապրում է Ռուսաստանում, որտեղ 1907 թ. հրատարակում է «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» գրքուկը: 1909 թ. նա գնում է Կարին, ապրում Վրացյանի, Ռոստոմի ընկերակցությամբ, Եփրատի ափերին ու ջրերում կատարած որսորդությամբ զարմացնում ընկերներին: 1910 թ. Դումանը մեկնում է Կոպենհագեն, մասնակցում 2-րդ ինտեր-

նացիոնալի համագումարին: Համագումարում, պատգամավորների պահանջով, Վարանդյանից բացի, զեկուցմամբ հանդես է գալիս նաեւ Դումանը: Նրա ելույթը ռուսերեն էր եւ նվիրված էր զինված ապստամբության ու ինքնապաշտպանության խնդիրներին, հայ-թուրքական ընդհարումներին, Դաշնակցության զինված ուժերի քանակին, մարտավարության ձեւերին: Նա ներկայացնում է ինքնապաշտպանության կազմակերպման ծրագիրը:

Համագումարի ավարտից հետո Դումանը վերադառնում է Կ. Պոլիս, վերահրատարակում «Նախագիծը»:

Կարճ ժամանակ անց Նիկոլ Դումանն անցնում է Պարսկաստան՝ Թեհրան: Այստեղ հայ դաշնակցական գործիչների եւ պարսիկ հեղափոխականների միջեւ կայացած բանակցությունների արդյունքում Դաշնակցության անունից Ռոստոմը խոստանում է զինված ջոկատ ուղարկել Ատրպատական օգնելու միապետության դեմ ապստամբած պարսիկ սահմանադրականներին: Դումանը համաձայն չէր կուսակցական ժողովի որոշմանը. նա կարծում էր, որ պարսիկ ժողովուրդը պատրաստ եւ հասունացած չէ հեղափոխության համար: Մեծ ռազմագետը լավատես չէր հաղթանակի նկատմամբ, քանզի մտավախություն ուներ, որ ցարական Ռուսաստանը ցանկացած պահի կարող էր զորք մտցնել Պարսկաստան՝ շահին օգնելու նպատակով:

Պարսկաստանում 1905 թ. սկսված ժողովրդական ըմբոստացումը միապետական վարչակարգի դեմ շարունակվում էր փոփոխական հաջողություններով: Այն հատկապես սրվում է Թավրիզ ռուսական զորք մտնելուց հետո: Պարսից ժողովրդի հակամիապետական ապստամբության կազմակերպիչներից էր գործում մասնա-

կիցներից Եփրեմ Խանի (1868–1912 թթ.) ղեկավարած ապստամբական բանակը 1911 թ. հաղթանակ է տանում: Հայերը խուսափում են զոհերից, ռուսական բանակը հաշվի է առնում հայերի չեզոքությունը: Նույն 1911 թ., ելնելով ծանր վիճակից, պարսիկ եւ հայ հեղափոխական մարմինների ու Թավրիզի ապստամբական զինված ուժերի խնդրանքով հրամանատար է նշանակվում Նիկոլ Դումանը: Նա Թավրիզ է գալիս իր 100-հոգանոց մարտախմբով եւ նշանակվում սահմանադրական ուժերի ընդհանուր հրամանատար: Թավրիզ հասնելով՝ Դումանը կարճ ժամանակում կարողանում է կազմակերպել քաղաքի պաշտպանությունը, թեւ ուժերն անհավասար էին: Շուտով իրականանում է Դումանի կանխատեսումը. հեղափոխական ուժերը երկար չեն դիմանում, պարտվում են: Ռուսական զորքը երկրորդ անգամ է մտնում Պարսկաստան եւ շարժվում Թավրիզի ու Թեհրանի ուղղությամբ: Հայ մարտիկները, նախապես ստանալով Եփրեմի թույլտվությունը, 1911 թ. սեպտեմբերին Թեհրանով ու Սալմաստով անցնում են Վան:

Որոշ ժամանակ մնալով Վանում՝ Դումանը, Արամի ու Իշխանի հետ, մարտական ուժեր է կազմակերպում, սակայն Վանի նահանգապետի կարգադրությամբ հեռանում է այնտեղից: Գնում է Կ. Պոլիս, ապա՝ Թիֆլիս, առողջական վիճակից դրված՝ ներկայանում է ռուսիկանատուն: Նրան ձերբակալում են, օգնում Մետեխի բանտը: Ընկերների օգնությամբ, սակայն, նրան ազատում են, ուղարկում բուժվելու Աբասուման, ապա՝ Սուխումի, Կիսլովոդսկ:

1914 թ. սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, բուռն թափով ծավալվում է կամավորական շարժումը: Դումանը չի խորհուրտում կամավորական շարժումը, որը, ըստ նրա, կարող էր թուրքերին առիթ տալ նոր կոտորածների: Այդուհանդերձ՝ նա կամավորական խմբերի հրամանատարի ամենահավանական թեկնածուն էր: Սակայն նրա առողջական վիճակը վատթարանում է, եւ նրան Բաքվում տեղափոխում են իվանդոնոց:

Առողջական ծանր խնդիրներ ունեցող Նիկոլ Դումանը, որ անզուսպ, անկասելի ձգտում ուներ մասնակցելու աշխարհամարտին, իր ներսում փոթորկվող այլբախություններին տարաբախտաբար վերջ է դնում բոլորի համար անսպասելի կերպով. 1914 թ. հուլիսի 27-ին Նիկոլ Դումանն ինքնասպան է լինում: Նրա աշյունը Բաքվից տեղափոխում են Թիֆլիս, թաղում Խոջիվանքի հայոց գերեզմանատանը՝ Սիմոն Ջավարյանի կողքին:

Հազվադեպ է պատահում կամ գրեթե չի պատահում, որ ինքնասպանություն գործած անձը նման հարգանքի եւ մեծարանքի արժանանա: Բայց Նիկոլ Դումանն իր մահվան հանգամանքով էլ ամրագրեց իր անվան շուրջ արդարորեն հյուսված մեծագործ հեղափոխականի դյուցազնապատումը: Թոքախտից հյուսված ազատագրության մարտիկը, հայ կամավորական շարժման շղթայագերծման համար Թիֆլիսում հավաքված դաշնակցական քաջարի հայրուկների զորաշարժին ի պատասխան եւ ապրելով այն անհուն տառապանքը, որ ինքն ի վիճակի չէ այլեւս իր բաժին մասնակցությունը բերելու հայ ժողովրդի պաշտպանության ու ազատագրության ճակատագրական իրադարձություններին, նախընտրեց սեփական կտրճանակով վերջ տալ իր... սպառված կյանքին...

Նիկոլ Դումանին դիպուկ գնահատական է տվել Գաբրիել Լազյանը՝ գրելով. «Նիկոլ Դուման եղաւ հայ ազգային-ազատագրական պայքարին ամենէն մտաւորական ֆետային, որ հաւասարապէս եւ մարտիկ-ֆետայիններու, եւ մտաւորական-քաղաքական գործիչներու ակնածանքին արժանացաւ»:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ակնառու գործիչ, մեծ հայդուկապետ Նիկոլ Դումանի մահվան 90-ամյա տարելիցին՝ 2004 թ., իր հայրենի Ղլաղ (այժմ՝ Ճաղկաշատ) գյուղում ազգագրական հուշահամալիր-թանգարան է ստեղծվել:

Թե երբևանից է սկսվել կառուցվել այն տունը, որտեղ տեղակայվել է հուշահամալիր-թանգարանը, հայտնի չէ, սակայն հայտնի է, որ տան շինարարությունն ավարտել են Նիկոլ Դումանի ծնողները 1912 թ.: Հուշահամալիր-թանգարանը բաղկացած է 4 բաժանմունքից՝ Նիկոլ Դումանի դահլիճ, 19-րդ դարի վերջի ավանդական բնակելի սենյակ, կոմունալ սենյակ, բակի շինություններ: Թանգարանը մշտապես համալրվում է նվիրատվությունների եւ գյուղում հայտնաբերված նոր ցուցանմուշների հաշվին:

Ժողովուրդը հավերժացրել է Նիկոլ Դումանի հիշատակը: Նրան է նվիրված «Խանասորի մեծ խոյանքի...» սկզբնատողով «Նիկոլ Դուման» երգը: Նրա անունով փողոցներ են անվանակոչվել ՀՀ մի քանի բնակավայրերում: 2017 թ. Երեւանում (ԵՊՀ) անցկացվել է հայրենամարտի մեծ գործիչ ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողով:

Արման ՄԱՆՈՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու

## ՄԱՐԿ ԿՈՐՆԵՐ

### Սկիզբը՝ թիվ 2

Տիրոջ երկրորդ գալստյան (parusia) տունը, ինչպես ասում են մասնագետները, ամպերի վրա Քրիստոսի փառապանծ հայտնության տունը, հրճվալից անհամբերությամբ էին նշում: Հարությունը սովորաբար տոնվում էր կիրակի օրերին: Գուցե լավ կլիներ, որ Ջատկի մերօրյա տոնակատարությունները վերագտնեին այդ խանդավառությունը, որը հույս էր եւ սպասում՝ Հարություն պատումի լուսաշող հայտնությանը՝ բոլոր մարդկանց առաջ:


Հուդան մատնում է Հիսուսին տոնի ժամանակ: Այդ տոնը ծիսական բնույթ ուներ: Հուդան չէր սպասում, որ Հիսուսը խաչվելու է:

Հուդան մատնում է Հիսուսին, որպեսզի նա տոնի ընթացքում ու ամբոխի առաջ Իրեն հայտարարի Իսրայելի Մեսիա ու գործի ըստ այդմ: Գաղափարը նոր չէ: Այն հղացել է 1797 թ. Շմիդի, հետո նաեւ շատ ուրիշների կողմից՝ հաշվի առնելով այն դիտարկումները, որ Բարեկարգության ժամանակներում արել էին Անդրեաս Մուսկոլուրը (16-րդ դարի գերմանացի լյութերական աստվածաբան) եւ նույն ժա-

մանակաշրջանի շվեյցարական բողոքական աստվածաբան Բենեդիկտ Արեթուսը: Գաղափարը նոր չէր: Ինձ համար կարելու էր ցույց տալն է, թե որքան է այդ վարկածը ճշմարտաման: Հիսուսին պարտադրելու համար էր, որ Հուդան պարտադրեց նաեւ քահանաներին:

Այստեղ գուցե կա զեյտականության մի ողջ հետին պլան, որ կարիք ունի ուսումնասիրության: Ձեյտոներ անվանում էին գաղտնի քաղաքական կուսակցության անդամներին: Բուն բառը նշանակում է ջերմեռանդներ, հրեական ճնշված ազգի նվիրյալներ: Նրանք պայքարում էին հանուն ազգային ազատագրության: Հայտնի է, որ Հիսուսի տասներկու աշակերտների մեջ առնվազն մեկը զեյտ էր, եւ դա Սիմոն էր, որը հենց Ձեյտո մականունն էր կրում: Ձեյտոներին լատիներեն կոչում էին sicarii-ներ (sicarium բառից, որ նշանակում է դաշույն, ինչը նրանք կրում էին գիշեր-ցերեկ): Արդ, հարց է ծագում, թե արդյոք Իսկարիոտացին արամերեն sicarius-ի տառադարձումը չէ, որից պարզ պիտի դառնա, որ Հուդան եւս զեյտ էր: ➔ էջ 5, 6

## ՀՈՒՂԱՆ





# Վաթառուականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը



Սկզբը՝ 2021-ի թիվ 12-24, 2022-ի թիվ 1-2

ԺԳ

Վահագն Գրիգորյանը գրում է մեր կյանքի, մեր առօրյայի մասին: Նրա «Կարմիր ձյունը» վիպակի հերոսը՝ Յովհաննեսը, միջակ կարողությունների տեր, ծնողների ջանքերով եւ միջնորդների օգնությամբ կյանքում իր տեղը գտած մի անդամ մարդ է, աշխատում է խմբագրություններից մեկում եւ մի քիչ գործի բերումով, մի քիչ էլ հոր հարցասիրությունը բավարարելու նպատակով փորձում է ճշտել իր ցեղի պատմությունը: Ցեղի պատմությունն այս դեպքում

պապի կենսագրության հետ կապված հարցերն են, մեր հասարակարգի ձեւավորման շրջանում մոռացման մատնված պապի հերոսության բացահայտումն է, ինչը կարելի է հոր համար, իսկ իր համար, ըստ էության, անկարելի է ու երկրորդական: Յովհաննեսը կյանքին նայում է անտարբեր, մեռյալ հայացքով, նա չունի մեծ ձգտումներ, խաղաղ է եւ ոչինչ չի ձեռնարկում: Նրա խաղաղությունն այս դեպքում ո՛չ վաստակած հավասարակշիռ վիճակ է, ո՛չ էլ խեղճության արդյունք, այլ կյանքում ոչինչ չունենալու արտահայտություն՝ ներքին դատարկություն: Նա իրեն չի տեսնում նաեւ պաշտոնի ու դիրքի համար մարտնչող հավակնորդների շարքերում, որովհետեւ, ինքնաճանաչողության կարողություններ ունենալով, շատ լավ գիտի իր «արժեքը»: Ահա նրա ինքնաբերական մի քանի տող. «Տարիներ հետո ես գուցե կսկիծով հայտնաբերեմ, որ դարձել եմ խմբագրության երիտասարդ աշխատակիցների ծաղրի ու կատակների առարկան. գուցե նաեւ, ով գիտե, ինձ հաջողվի զարմացնել աշխարհը: Վերջին հնարավորությամբ ես քիչ եմ հավատում... Նոր տեղս չի խոստանում արագ թռիչք, ընդհանրապես պատվախնդիր ու հեռուն գնացող նպատակներ ունեցող մարդու համար չէ, բայց չէ որ ես գուրկ եմ այդ հատկությունից»:

Գրիգորյանի հերոսի այս նկարագիրն ակամա հիշեցնում է Ալբերտ Կամյուկի «Օտարականը» վիպակի Մյուրային. մի մարդ, ով անտարբեր է նայում կյանքին, ով իրեն օտար է զգում իր մոր հանդեպ, ով անապահով է ապրում, ով մեծ ոչ մի գրգռչեն անապահով, նա օտարված է հանրային կյանքից եւ, ի վերջո, օտարված է ինքն իրենից: Սպանություն կատարելուց հետո նա նույնիսկ վճռական գործողությունների չի դիմում՝ ինքն իրեն անխուսափելի մահից փրկելու համար: Բացի դա՝ Կամյուկի հերոսը եւս առանց գուճազարման, իրեն բնորոշ նկարագրով ճանաչում է իրեն եւ մեծ սպասելիքներ չունի ինքն իրենից: «Կարմիր ձյունը» վիպակի հետ մասնակի առնչություն ունի նաեւ «Թագավորի փոքր որդին» վիպակը: Առնչություն այն առումով, որ այս գործում եւս գլխավոր հերոսն զբաղված է իր ցեղի հետ կապված սպանության ինչ-որ պատմության ճշտմամբ: Դա դառնում է հերոսների գործողությունների նախադրյալ: Ներկայացվում է տղայի հայրը՝ դասախոս, ինքը՝ տղան՝ Յուրայի մարտնչությունը, որը փորձակայանի ղեկավար աշխատող է, ներկայացվում են նաեւ տղայի հետ կապված մի շարք այլ անձինք (Նարինե, Մերի): Յուրայը մեր ժամանակին բնորոշ սովորական մտավորականի կերպար է: Ներկայացվում է ընտանեկան հարաբերությունների եւ աշխատանքային առօրյայի մեջ: Նա բաժանված է կնոջից ու երեխայից, մտերիմ է ուրիշ աղջիկների հետ: Մի խոսքով՝ սովորական մի կյանք, ինչը մեծ բովանդակություն չունի: Սովորական մարդկային հարաբերություններ եւ ոչնչով աչքի չընկնող կյանքի պատկերներ ու հերոսների կերպարներ են ներկայացվում նաեւ նրա «խոստում» գեղարվեստորեն բավականին թույլ վի-

պակում: Յեղիակն ստեղծել է ավարտուն պատմություն, ինչը, սակայն, գեղարվեստական ու գաղափարական լուրջ խտացումներ իր մեջ չի պարունակում: Ոչնչով աչքի չընկնող մարդկանց կյանքի պատմությունները հեղինակը երբեմն ջանում է «փրկել» նյութի հետաքրքրաշարժությամբ: Այս տեսակետից բնորոշ է «Փակ սենյակը» վիպակը. ստեղծվում է կայուն մի վիճակ, որ ենթարկվում է մանրամասն վերլուծության: Փակ սենյակը, ուր մտնողը, ի վերջո, մեռնում է, բացում է գաղտնիքը: Փակ սենյակ մտնողները, տեսնելով մանկան անմեղ մի նկար, զգում են իրենց մեղավոր լինելը եւ հոգեկան տանջանքի ենթարկվելով՝ մեռնում: Յիշողությունը եւ խիղճը, անմեղության, մաքրության առջեւ, նրանց դատապարտում են ինքնավերլուծման, հոգեկան մաքառումների եւ իրենց մեղքի գիտակցման, որից այն կողմ նրանց գոյությունն այլեւս չի շարունակվում: Այս ամենը շատ մտացածին է եւ համոզիչ չէ: Մանկան անմեղ նկարը խորհրդանշան է, որ փոխարինում է նման վիճակների համար առարկայորեն հստակ ու որոշակի մեկ այլ խորհրդանշանի՝ Յիսուս Քրիստոսի նկարին, որ փակցված է թե՛ եկեղեցիներում եւ թե՛ հավատացյալների տներում: Ժամանակը խորհրդային էր, աստվածամերժ, այդ իսկ պատճառով հեղինակը հեռացել է ավանդական խորհրդանշանից եւ ստեղծել փոխարինող այլ խորհրդանշան: Վիպակի հարցադրումը հետաքրքրական է, թերացումն այն է, որ հեղինակը, հոգեբանական զարգացումով սկսելով շարադրանքը, չի կարողանում հոգեբանական զարգացումով էլ գործը հասցնել ավարտին՝ երկրորդ մասից ընտրում է այլ շարունակություն եւ փոխաբերական իմաստների խաղով ամփոփում ասելիքը: **Էջ 4, 6**

## Հաղպատի Կուսանաց անապատի առեղծվածը

Նաղպատի նշանվոր վանական համալիրի պարիսպներից դուրս՝ արեւելյան կողմի բարձունքին, կա մի փոքրիկ եկեղեցի՝ Կուսանաց անապատ անվամբ: Գեղեցիկ զմբեթազարդ եկեղեցու մուտքը երիզված է ուղղանկյուն զարդաքանդակ շրջանակով ու որմնասյուններով: Եկեղեցու գրեթե հավասարակողմ պատերը սրբատաշ են: Ներսի չորս անկյունների ավանդատները զծագրում են խաչաձեւ հատակագիծ, որի արեւելյան կողմում պատարագամատույց տուրք Սեղանն է: Երբ եւ ինչ հանգամանքներում է կառուցվել այս եկեղեցին. պատմական աղբյուրները լուռ են: Եկեղեցու մուտքի ճակատին արված արձանագրությունը վկայում է միայն, որ այն վերստին վերանորոգվել է 1676 թվականին եւ կոչվել է Տիրամոր անվամբ: «Ի թուին Ռեհե բարեպաշտ ազատ յագագաց Եկուլեանց մեծահաւատ Չալմ՝ որդի Շահ-Ղուլունի՝ ողորմած ամուսնաւ իւրով վերստին նորոգեաց զտաճարն Տիրամորն»:

Եկեղեցու ճարտարապետական հորինվածքը, սակայն, մասնագետներին թույլ է տալիս պնդել, որ այն 13-րդ դարի կառույց է: Ավելին՝ ազգագրագետ Երվանդ Լալայանը, թվարկելով Յուրայանի վանքերը, Կուսանաց անապատի կողքին դնում է 1279 թվականը՝ առանց ճշտելու իր աղբյուրը: Սակայն առավել առեղծվածային է եկեղեցու Կուսանաց անապատ անվանումը: Արդյո՞ք երբեկիցե այստեղ ապրել են կույսեր: Դա եկեղեցու կուսանաց անապատների մասին չափազանց աղքատիկ աղբյուրներն այս մասին եւս լուռ են: Դա եկեղեցու կանանց մեծաստանների ու միանձնուհիների մասին արժեքավոր աղբյուր են հայկական ձեռագրերի հիշատակարանները, որտեղ հանդիպում են բազմաթիվ կույսերի, նաեւ կուսանոցների

մասին արձանագրումներ: Դաղպատում ընդօրինակված՝ մեզ հայտնի ձեռագրերի եւ ոչ մի հիշատակարանում որեւէ կույսի անուն չի հանդիպում: Դրանցից միայն հիշատակելի է 1437 թվականին ընդօրինակված Շարակնոցի հիշատակարանը, որտեղ Մարտիրոս գրիչը խնայուն է հիշել Ուստիանե անունով քրոջը, որ «միամտութեամբ սպասաւորեց մեզ»:

Ամեն դեպքում, սա եւս ապացուց չէ Դաղպատում միանձնուհու, առավել եւս՝ կուսանոցի առկայության համար: Եկեղեցու Կուսանաց անապատ անվան մասին չի հիշատակում նաեւ Դաղպատի պատմագիր Յովհաննես վարդապետ Ղրիմեցին: Նա Դաղպատ է այցելել 1822 թվականին, որտեղ եւ գրել է իր «Պատմություն հռչակավոր վանքի Յարբատա Ս. Նշան» ձեռագիր աշխատությունը: Ղրիմեցին նշում է միայն, որ ժողովուրդն այս եկեղեցին կոչում է անապատ, որտեղ նախկինում բնակվել են Դաղպատական քի խստակրոն միաբանները, որտեղ եւ իր ժամանակին պահպանված էին նրանց խցերի ավերակները: Սակայն որտեղից է եկեղեցու Կուսանաց անապատ անվանումը: Այս անվանումն առաջին անգամ հանդիպում է Ղրիմեցու աշխատությունից շուրջ երկու տասնամյակ անց գրված մեկ այլ՝ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի «Ճանապարհորդություն ի մեծն Դայաստան» աշխատությունում: Ինչպես նկարագրում է Ջալալյանցը, եկեղեցին գտնվում է վանքի արեւելյան կողմում՝ ձիարշավ հեռավորությամբ: Եկեղեցին մեծ չէ՝ 6 կանգուն երկարությամբ եւ նույնքան լայնությամբ: Ջալալյանցը ներկայացնում է նաեւ եկեղեցու մուտքի վերոհիշյալ արձանագրությունը՝ եկեղեցուն տալով արդեն Կուսանաց անապատ անվանումը: «Ի վերայ դրան շենոց կուսանաց վանքի Դաղպատայ՝ ի թուին

Ռեհե նորոգեալ է բարեպաշտ իշխանն Չալ եւ կին իւր Վարվար»:

Կարո Ղաֆադարյանը կարծում է, որ Ջալալյանցի այս գրությունն է պատճառ դարձել եկեղեցին հետագայում Կուսանաց անապատ կոչելու, որի համար էլ ինչպես ենթադրում է Ղաֆադարյանը, հիմք է հանդիսացել եկեղեցու՝ Տիրամոր անվանումը: Իսկ թե որտեղից է Ջալալյանցին հայտնի դարձել եկեղեցին վերանորոգած իշխան Չալի կնոջ՝ Վարվարի անունը, Ղաֆադարյանը դժվարանում է պատասխանել: Նկատենք, սակայն, որ Ջալալյանցն աշխատությունը գրել է դեռեւս իր վարդապետության տարիներին, երբ դեռ Սանահինի վանքի միաբան էր: Եվ հնարավոր է, որ եկեղեցուն Կուսանաց անապատ անվանումը տրվել է ժողովրդական Ղրիմեցուն անհայտ ավանդության համաձայն: Նույն կերպ, թերեւս, կարելի է բացատրել նաեւ Վարվար անվան հիշատակումը: Թիֆլիսում լույս տեսնող «Արձագանք»-ի հեղինակը եւս 1884 թվականին իր ճամփորդական ուղեգրությունում նշում է, որ ժողովուրդն այս եկեղեցին անվանում է Կուսանաց անապատ, որտեղ իբրեւ թե վերջին ժամանակում կույսեր են միաբանել: Արդյո՞ք ժողովրդական այդ հիշողությունը գալիս է 17-րդ դարից, երբ Դաղպատում կուսանոցների վերաթեքման շրջան էր, դժվար է ասել: Դամենայնդեպս, այս շրջանի մասին եւս պատմությունը լուռ է: Իսկ մենք ուզում ենք հավատալ Դամենայնդեպսի զրքում Կուսանաց անապատի մասին գրում է. «Ամենավանական չէ, որ անոր



հովանին ներքեւ երբեմն ապրած ըլլան կուսաններ միաբաններու առաջնորդությամբ, եւ կան մախապես կուսաններու վանք եղած ըլլա»:

Ամեն դեպքում՝ Ջալալյանցից հետո Կուսանաց անապատ անվանումը հետագայում կրկնել են նաեւ այլ հեղինակներ՝ Ռուստան Բեկ Երզնկյանցը, Երվանդ Լալայանը եւ այլք: Եվ այսօր էլ փոքրիկ այս եկեղեցին իր այցելուներին ներկայանում է Կուսանաց անապատ անվամբ:



# ԵՐԲ ԵՆԵՂՆԵՐԸ ԿԱՆԴՈՒՆ ԵՆ



Գրականագետ Սեւակ Արզումանյանն այս վեպի մասին իրավացիորեն գրել է. «Ստ. Ալաջաջյանն արտացոլում է մեր պատմության ամենադրամատիկ փուլերից մեկի ազգային-քաղաքական կյանքը».— շեշտել նրա ժամանակակից հնչեղությունն ու բարձրացրած հանգուցային հարցերը, ընդգծել նաեւ այն «ամափ սերն ու կարոտը», որ տաճել է հեղինակը հայրենի եզերքի նկատմամբ (տես Արզումանյան Ս., Ստեփան Ալաջաջյան, Երեւան, 2008, էջ 103, 110):

Եթե ասվածին ավելացնենք հեղինակային խոսքի նպատակամետությունն ու հուզականությունը, ազգային մտածողության խորին դրսևորումները, գեղարվեստական պատկերավորման հարստությունն ու վարպետությունը, վեպն իրոք անմխաղեպ երեւոյթ էր ինչպես Ալաջաջյանի ստեղծագործական շրջանում ունեցած իր դերով, այնպես էլ ժամանակաշրջանի այդ գրականության առաջընթացի առումով:

Վեպը ջերմությամբ է ընդունել նաև սփյուռքահայությունը: Ալաջաջյանի այդ գրքի մասին Բոստոնի «Հայրենիքում» Արամ Հայկազը գրեց, որ վեպը կարողացել է «աճող խանդավառութեամբ», որ վեպը պատմում է այն մարդկանց մասին, որոնք մեր «անկախութեան երազին պահպանողներն եղան» (տես «Հայրենիք», Բոստոն, 1967, օգոստոսի 1): Իսկ սփյուռքահայ գրականագետ Օննիկ Սարգսյանը, Բեյրութի իր խմբագրած «Շիրակ» ամսագրում հատկապես արժեւորելով վեպում հանդես բերված հերոսներին, որոնց «լեռնորդիներ» է անվանում, ընդգծեց նրանց «հայու բնորոշ յատկանիշներով» լեցուն ներաշխարհը, «հայ մարդու մտածումներով» կեանքի, մահուան, պետականութեան, եկեղեցիի ու մշակոյթի մասին» ունեցած մտահոգություններն ու միջրումները (տես «Շիրակ», Բեյրութ, 1968, թիվ 6-7):

Ալաջաջյանի վեպը հետագայում մի քանի անգամ վերահրատարակվել է միասնական հատորով. վերջինը եղել է 2004-ին՝

մեր գրականության միջուկը մշակներից մեկի՝ Գոհար Աճեմյանի խմբագրությամբ:

Միշտ մնալով ընթերցողների ուշադրության կենտրոնում՝ վեպը զարմանալիորեն քիչ է արժանացել գրականագիտության ուշադրությանը:

Արեւմտահայոց ազգային-ազատագրական պայքարի ու նրա հետեւանքների թեման նոր չէր մեր գրականության համար: Կոստան Չարյանի «Տատրագոմի հարսը», Ակսել Բակունցի «Լառ Մարգար» եւ «Շիրակի փողը», Խաչիկ Դաշտեցի «Խողովան», Հրաչյա Քոչարի «Կարոտ» եւ «Նահապետ», Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» գործերը, հուշագրական ժանրի գործերից Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ հեղափոխականի մը հիշողությունները» եւ մի շարք այլ ստեղծագործություններ բավականին խորությամբ էին անդրադարձել հարցին, բայց ասելիք դեռ շատ կար, ու քիչ չէին չպեղված ու գեղարվեստական խոսքի մակարդակի չբարձրացված խնդիրները:

Ալաջաջյանի վեպի բերած նորություններից էր մեր ժողովրդի արեւմտահայ հատվածի բեկորներից մեկի՝ կիլիկիահայության ողբերգական կյանքի վերջին շրջանի՝ հետեղեռնյան մի քանի տարիների իրադարձությունների արտացոլումը, որոնց մասին ըստ ամենայնի ու համակողմանի գրված չէր մեզանում:

Վեպի լույսընծայման 55-ամյակը լրանում է այս տարի, որն առիթ է ընծայում մեզ մեկ անգամ եւս ընթերցողի ուշադրությունը բեւեռելու վեպի հարցադրումների ու գաղափարադրույթների վրա եւ, մանավանդ, նրա հայացքը շրջելու դեպի մեր ոչ վաղ անցյալի՝ որքան ողբերգական, նույնքան հերոսական այն իրադարձությունները, որոնց մեջ ապրեց հայեցի անանց գաղափարներ ու անմնացորդ միջուկ ունեցող մի ամբողջ սերունդ՝ հատկապես ընդգծելով, թե որքան կարեւոր է անցյալը ներկայի ու գալիքի ուղիները հստակեցնելու համար:

Թուրքիայի վարած քաղաքականությունը եղել է մնում են Հայոց եղեռնը ցանկացած գնով ժխտելն ու մոռացության տալը: Ալաջաջյանի վեպը մեկ անգամ եւս վավերացնում է պատմական անժխտելի ճշմարտությունը, գեղարվեստական խոսքի միջոցով ցույց տալիս այն ավերածություններն ու

նախճիրները, որոնք կատարել էին թուրքերը Կիլիկիայում դարերի ընթացքում՝ եղեռնից առաջ, եղեռնի տարիներին ու հետեղեռնյան այն մի քանի տարիների ընթացքում, որի մեջ ապրեցին իրենց հայրենի բնակավայրերը վերադարձած վերապրող հայերը:

Վեպն այն քիչ գործերից է, որ մղում է խորհրդածությունների, մեկ անգամ եւս մտածել տալիս մեր ոչ վաղ անցյալի ողբերգական դեպքերի մասին, եզրահանգումների դուռ բացում հայ մարդու համար, մանավանդ մեր օրերում, երբ շատ բան, որ ազգային է ու հայեցի, առնվազն մոռացության է մղվում՝ մշուշելով ազգային միասնության գերագույն իդեալ-նպատակը: Ու եթե այսպես շարունակվի, հայ պատմության պանծալի շատ դրվագներ անդառնալիորեն մատնվելու են կորստյան:

Վեպն ունի «Հորս հիշատակին» ընծայականը, որը 1966–67-ի հրատարակությունում չկա եւ ավելացվել է միայն 1970-ի տպագրությունում, մի հավելում, որ խոր ընդգրկում ունի: Հոր պատկերի կերպավորումն ու նրանից բխող ներշնչանքը նոր բան չէին մեր գրականության մեջ: Չարենցյան հիշատակումներն իր հոր մասին պարզապես Աբգար աղային տրվելիք տուրք էին, որն ընդամենը գորգավաճառ էր եւ որպես կերպար ու ասելիք՝ գրեթե բացառապես մեր գործերում: Ալաջաջյանի համար հայոց մարմնացումն է պատմության շատ որոշակի շրջանի, հայոց ողբերգության հետեւանքների անմիջական կրողի:

Հովհաննես Շիրազի հայրը, որ նույնպես հայկական կոտորածների ականատեսներից էր եւ իր «մոլոր» աչքերում պահում էր բազում գերեզմաններ՝ որպես «խաչեր»՝ խրված իր սրտում, շիրազյան պոեզիայում, այդուհանդերձ, հանդես է բերվում որպես եղեռնի անհատական կրող, մինչդեռ Ալաջաջյանի համար իր հայրը այդ նույն եղեռնի ընդհանրացված խտացումն է, նրա արտահայտիչը:

Ալաջաջյանը խորին սիրով է կապված եղել հոր հետ՝ ոչ միայն որպես որդի ու արյան կրող: Նրան կապել է նաև հոր գերդաստանի պատմությունը՝ որպես ցեղի ու ժողովրդի տառապանքների ու ճակատագրի անմիջական զոհի: ➔ էջ 7

## Վարժաուսանականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

← էջ 3  
Դա թույլացնում է ներգործման ուժը եւ ոչնչացնում հետաքրքրաշարժությունը:

Այս գործում եւս զգալի է Կամյուի ազդեցությունը: Վիպակն իր պատմումով հերոսի հոգեբանական բացահայտման եղանակներով հիշեցնում է «Անկում»-ը:

Գեղարվեստական կատարման մակարդակով ավելի հասուն գործ է «Տեղատվություն» վեպը: Վերնագիրն ինքնին բնորոշում է մարդկային նկարագրեր կերտելու հեղինակային նախասիրությունը: Տեղատվությունը կատարվում է հերոսի ընտանեկան, աշխատանքային հարաբերությունների եւ ընդհանրապես բարոյականության ու հոգեբանության մեջ: Մի խոսքով՝ տեղի է ունենում անկում:

Թե Արշակյանի եւ թե Գրիգորյանի նշված երկերը մղում են ընդհանուր եզրակացության: Այս եւ այլ հեղինակների այս կարգի գործերի առիթով ակամա ձեւակերպում է պահանջում այն միտքը, որ այսօրվա ընթացիկ սովորական կյանքը որոշ գոյակիճակներում մեծ հոգեբանական զարգացումներ իր մեջ կարծես չի պարունակում, այդ իսկ պատճառով աստիճանաբար հասարակական կարեւորություն ունեցող հերոսներից անցում է կատարվում դեպի շարքային, երբեմն անդեմ կյանքով ապրող սենյակային մարդը: Սովորականի, կյանքում ոչնչով աչքի չընկնող շերտերի վերհանումն իր հետ գրականություն է բերում

սովորական եւ ոչնչով աչքի չընկնող հերոսի, ում համար բավարար հիմքեր կյանքի որոշ վիճակներ, բոլոր դեպքերում, տալիս են: Այս նախադրյալը, բոլոր հավանական առարկություններով հանդերձ, կարեւորություն է տալիս մի հարցի. գուցե ժամանակն է, որ մեր պատկերացումների մեջ հիմնավոր տեղ ունեցող վեպի եւ ողբերգականի գեղագիտական հասկացությունների կողքին այսօր լուրջ տեղ հատկացնենք նաև սովորականի գեղագիտական ըմբռնմանը: Բայց դա, բոլոր դեպքերում, չի բացառում գրականության բովանդակալիության, քաղաքացիական հնչեղության, գաղափարական-փիլիսոփայական հիմքի եւ հեղինակի աշխարհայացքային կողմնորոշման առկայությունը:

Սովորական մարդկային նկարագրերի, կենսական վիճակների, գեղարվեստական պատկերումը, մեծ ուժերի ու կրքերի (ավանդական ըմբռնումը հերոսական բնավորությունների) բացակայությամբ հանդերձ, պետք է ամռվազն ունենա տվյալ նյութին բնորոշ հոգեբանական եւ իմաստային խորություն ու խտացում: Հակառակ



դեպքում մնում է սոսկ իրադարձությունների արտաքին շերտը, որը միշտ չէ, որ գուն հետաքրքրական է ու ընթերցվող: Թեեւ հետաքրքրաշարժությունն ու ընթերցվող լինելն ամենեւին էլ գրականության հիմնական հատկանիշները չեն:

Սովորականի ըմբռնումը թե հերոսի հարցում եւ թե ընդհանրապես գեղարվեստական համակարգի մյուս բնագավառներում պետք է հաստատել հարցադրման կարեւորությամբ, ասելիքի համարային նպատակաուղղվածությամբ, գլխավորը երկրորդականից ու անտեղի մանրուքներից

զանազանելու հմտությամբ եւ, ի վերջո, ստեղծագործական ուժով ու վարպետությամբ:

Խորհրդային գաղափարական պահանջների պայմաններում մտավորական հերոսի այսպիսի կրավորականացումն ու փոքրացումը դառնում են իրականության պաշտոնական պահանջ, բայց ոչ ներքին անհրաժեշտություն. «...հեղինակը կարծես ձգտում է «ապահերոսացման», ամեն կերպ ջանում է իր հերոսին դուրս բերել սովորականի սահմաններից ու եթե ցայտունացնում է՝ ապա նույն այդ սովորական, ոչնչով աչքի չընկնող հատկանիշները միայն:

Այսպես, ըստ քննադատության, ինչպես Գրիգորյանի, այնպես էլ նրա սերնդակիցների առաջ ծառանում է երկու խնդիր՝ հերոսի ընտրության եւ նրա բարոյական գնահատության եւ շարադրանքի բյուրեղացման խնդիրները» (Լ. Հախվերդյան, Գրողն ու իր հերոսը, կամ՝ ո՞ւմ է պետք քո հերոսի խելքն ու շնորհքը, ԳԹ, 1973, թիվ 5, 26 հունվար):

Առօրյա, սովորական իրադարձությունների մեջ է ապրում նաև Նորայր Աղալյանի հերոսը: ➔ էջ 6



# «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը և պատմական աղբյուրները

Սկիզբը՝ թիվ 2

Աշխարհիկ կյանքի իրադարձությունների կողքին Դրասխանակերտցիին չի մոռանում անդարադառնալ նաև հոգեւորականությանը: Լինելով հոգեւորական, աստվածասեր եւ աստվածավախ մարդ՝ նա առաջնորդվում էր քրիստոնեական գաղափարախոսությամբ, հավատարմորեն հետեւում Սուրբ Գրքի վավերացնող սկզբունքներին: Դվին քաղաքի ահռելի երկրաշարժի ժամանակ (893 թ.) հայոց հայրապետն էր Ջաքարիա Ջազեցին: 22 տարի հայրապետական աթոռին լինելուց հետո Ջաքարիան վախճանվում է, եւ նրան հաջորդում է Գեւորգ անունով մեկը, որ Գառնի գյուղաքաղաքից էր (հետագայում պատմության մեջ կկոչվի Գեւորգ Գառնեցի): Հայոց նախարարների խորհրդով կաթողիկոս Գառնեցին թագավոր է օծում Աշոտ Առաջին Բագրատունուն: Այնուհետև հայրապետական աթոռին հաստատվում է Սաշտոց Ա եղիվարդեցին, որը եղել էր Հովհաննես պատմիչի ուսուցիչը: Վերջինս իր ուսուցչի մասին խոսում է մեծ երջանկությամբ եւ խոր ակնածանքով. «Թագավորը, ավագանին եւ այլ պատվական ազնվականները, հավանություն տալով նրա զեղահարմար ու սրբազան կյանքի ընթացքին, նրան նստեցրին սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռին» (187): Այնուհետև հայրապետական աթոռին հաստատվում է Հովհաննես Դրասխանակերտցին: Դրասխանակերտցու՝ կաթողիկոս օծվելուց հետո ինքը՝ Ֆեթիմակը, դառնում է իր երկրի գլխավոր կերպարներից

մեկը: Դրասխանակերտցին անաչառ պատմիչ է, սակայն ակնհայտ են նրա վերաբերմունքը հերոսներից յուրաքանչյուրի հանդեպ, համակրանքն ու հակակրանքը դեպքերի ու դեմքերի նկատմամբ: Մ. Աբեղյանը գրում է. «Հովհաննես կաթողիկոսի այդ երկն իր մի խոշոր մասով ոչ թե սոսկ պատմություն է այս բառի սովորական իմաստով, այլ ինքնակենսագրություն կամ հիշողություններ, եւ իբրև այդպիսին՝ կյանքի անմիջական կենդանի կոնկրետ արտահայտություն է: Ամեն հատվածներն այդ երկի լի են հեղինակի ապրումներով, հաճախ նրա կրած նեղություններով, նրա ցավազին վշտահարությամբ ժամանակի տխուր ու թշվառ կացության համար» (Աբեղյան Մ., Երկեր, հատոր 9, Եր., 1968, էջ 485):

Դրասխանակերտցին իր Պատմության մեջ կարողանում է լինել ռեալիստ եւ պատմությունը ներկայացնել օբյեկտիվորեն: Նա կարողանում է սթափ կերպով վերարտադրել եւ գնահատել հայարաբական եւ հայ-բյուզանդական հարաբերությունները: Երբեմն հենց ինքը՝ կաթողիկոսն է ստեղծում պատրվակներ՝ երկրի համար շահավետ բանակցություններ սկսելու: Նա կատարում է հաշտարարի դեր եւ փորձում է եղբայրություն ստեղծել Աշոտ Բռնավորի եւ Աշոտ Երկրորդ արքայի միջև: Սակայն պատմիչի դերն ու նշանակությունը առավել մանրամասն կքննենք ստորև: նրան հատկացված մասում:



Իստույով Աշոտ արքայի մասին պատմիչն անդրադառնում է նրա թագադրությանը, անուսնությանը, նրա վարած կռիվներին, հաղթանակներին ու պարտություններին:

Դրասխանակերտցին նշում է, որ Աշոտն անուսնանում է Սահակ իշխանի դստեր հետ, սակայն չի գրում անունը (պատմավեպում Սուրբացանը նրան անվանակոչում է Սահականույշ՝ թերևս նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա Սահակ իշխանի դուստրն էր). «Արքայորդի թագավորը գնում, կնության է առնում Սեւադա կոչվող մեծ իշխան Սահակի դստերը: Եվ այնտեղ (երբ) պարեր էին պարում եւ կաքավում, ուտիկան Յուսուֆը նրան է առաքում արքայական թագ եւ զեղեցիկ, փայլուն, պատմական զարդարուն զգեստներ, ոսկեաճծ ձիեր՝ զարդարված պատվական զենքերով ու զարդերով, ինչպես նաև իսմայելյան հեծելազուններ՝ նրան օգնելու համար: Այնուհետև իր հետ առնելով իր աներոջ՝ Սահակ իշխանի գործը, ահա հասնում է Դվին քաղաքի դարպասների մոտ, քանի որ այնտեղ էր տեղավորվել նրա անվանակից մյուս թագավորը: Եվ ապա զորք հանելով՝ նրանք կռվում էին միմյանց դեմ: Իսկ ես յուրաքանչյուրի հետ խոսում էի խաղաղության մասին մեկ, երկու, երեք անգամ» (303): Պատմական այս փաստը գեղարվեստական գեղեցիկ հնարանքով իր տեղն է գտել պատմավեպում, որ կրկին երևում է Սեդայի եւ Սահականույշի գրույցի ժամանակ: ➔ էջ 7

## ՄԱՐԿ ԿՈՐՆԵՐ

← էջ 2  
Ու այն փաստը, որ Պետրոսը Գեթսեմանի պարտեզ էր տարել մի սուր, շատերի հարցասիրությունն է արթնացրել, թե ար-



դյոք մոլեգին ու հախտուն Պետրոսը եւս չէր հարում զելոտների շարժմանը: Մատթեոսի ԺԷ 17-ի մեր թարգմանությունների մեջ Հիսուսի խոսքերն այսպես են ներկայացվում. «Սիմոն, Հովնանի որդի»: Բնագրում ասվում է «Սիմոն, Բար-Իոնաս»: Հնարավոր է, որ bariona-ն լինի աքթադերն բառ, որ նշանակում է ահաբեկիչ, ուստի եւ՝ «զելոտ»-ի հոմանիշը: Դա թույլ է տալիս պրոֆեսոր Կոլլվանին իր մի ուսումնասիրության մեջ այս հարցի վերաբերյալ ասել հետևյալը. «Արդ, մենք կարող ենք նման եզրակացությունն անել. տասներկուսից մեկը, այսինքն՝ Սիմոն Չելոտը, անշուշտ պատկանում էր զելոտներին. բայց մյուսները եւս հավանաբար հարում էին այդ շարժմանը, այսինքն՝ Հուդա Իսկարիոտացին, Պետրոսն ու զու-

ցե նաև Չեբեդիոսի որդին»: Հուդան զելոտ էր: Եփվելով անհամբերությունից, ինչպես կարող է դիմանալ այն բանին, որ Հիսուսն իր զորությունն ի ցույց չի դնում: Այժմ ար-

դեն հասկանալի է, որ դիմադրության այդ կողմնակիցը ցանկացել էր իր Ուսուցչին պարտադրել: Ինքն էր կամեցել արդյոք: Այս տեսանկյունից նա իրեն առաքելություն իրականացնող է համարում: Իր կարծիքով ինքը մի սուրբ գործ է կատարում, եւ միայն ինքը քաջություն ունի դա անելու: Հուդան գոռոզամիտ է: Փառատենչությունը նրան կուրացնում է: Լինելով շատ մոտ Հիսուսին՝ չհասկացավ նրան: Փոխանակ հույսը դնելու իր Ուսուցչի վրա ու նրան վստահելու, նա հիմնվում է իր բանախոսության ու սեփական նախածեռնության վրա: Այդ կերպ չար ոգին գործում է նրա մեջ ու հետզհետե նվաճում նրան: Հովհաննեսն իր Ավետարանում հստակորեն նշում է այդ առաջխա-

## ՀՈՒՂԱՆ

ղացումը: Նա ասում է. «Հուդայի մտքում սատանան սերմանեց Հիսուսին մատնելու գաղափարը» (ԺԳ 2): Այնուհետև՝ մատնության իրիկունը «սատանան մտավ Հուդայի մեջ» (ԺԳ 27): Սնապարծությամբ լցված ու զանց առնելով այն հնարավորությունը, որ ինքը կարող էր բացվել իր Տիրոջը ու հայտնել նրան իր դժվարությունների մասին, Հուդան սայթաքում է չարիքի զառիթափի վրա մինչ այն պահը, երբ մտադրությունը վերածվում է գործողության...

Բայց այդ գործողությունը ենթադրում է նշաններ, որոնք մեկնաբանվում են որպես հավաստում ու քաջալերանք եւ հասկացվում իր կողմից որպես կոչում: Հուդան դրանք գտավ իր ճանապարհին:

Նախ՝ նշանը, որ պաշտպանում է ու հավաստում: Մարտել Պագմոլի՝ վերը նշված պիեսուն դավաճանը, որպես հատուցում, ստանում է երեսուն արծաթ: Բոլոր ժամանակներում էլ նկատել են, թե որքան չնչին է այդ գումարը, որն ըստ ոմանց՝ համարժեք է մեկ ամսվա, իսկ ըստ ուրիշների՝ երկու ամսվա աշխատավարձի: Իհարկե գծով համար շնից մազ պոկելն էլ բան է, եւ Հուդան, որ խմբի գանձապահն էր, ըստ Հովհաննեսի, կառավարում էր ընդհանուր դրամական պահուստը քիչ թե շատ ազնվությամբ: Իսկապես, եթե նրան պետք լիներ երեսուն արծաթ, նա կարող էր դրանք կորզել գանձարկից: Ինչհետև, համաձայնեց այդ չնչին վարձատրությանը:

Եթե Հուդան իմանար Աստվածաշունչը (իսկ որպես բարեպաշտ հրեա՝ ինչպես կարող էր չիմանալ), այդ երեսուն արծաթն իր համար հայտնի գումար պիտի լիներ: Ջաքարիա մարգարեն (նա, ով ազդարարում էր Օծյալի մուտքը Ճաղկազարդին) խոսում է այդ մասին: Ջաքարիա 2-ի այդ հատվածում խոսվում է մարգարեի մասին, որն արածեցնում է ժողովրդի հոտն Աստծո անունից: Այդ հովիվ-մարգարեն կանխագուշակում է Օծյալին: Բայց ահա նրան վճարում են: Այդ վճարի չափն արտահայտում է այն արհամարհանքը, որ մարդիկ տածում են Աստծու նկատմամբ: Այսպիսով՝

Օծյալի կյանքն արժե երեսուն արծաթ: Ջաքարիան է դա ասում:

Եվ Պագմոլն այդժամ ավելացնում է, թե առաջարկելով հանձնել Հիսուսին՝ Հուդան երեւի հարցրել էր քահանաներին, թե նրանք ունեին երեսուն արծաթի մեսիանական գումարը: Փնտրում են գրպաններում ու քսակներում: Նրանց հաջողվում է հավաքել այդ գումարը: Եվ Հուդան արդեն համոզված է, որ դա էլ հենց նշանն է: Աստված է ինձ ասում մատնել նրան: Չվստահող քահանաներին ու նրանց, ովքեր կուզենային պահել նրան հսկողության տակ, Հուդան պատասխանում է. «Անհրաժեշտություն չկա ինձ շղթաների մեջ պահել: Մարգարեությունների ոսկե շղթաները զգված են վզիս չորս բոլորը...»:

Հուդան ստացավ այդ նշանը: Բայց ով է նրան տվել առաքելական այդ հրամանը: Հիսուսը: Այո, ուրիշ ոչ ոք, քան Քրիստոսն ինքը: Ըստ Մարկոսի ու Դուկասի՝ Հիսուսը վերջին ընթրիքի ժամանակ իբր չի ասել այս խոսքերը. «Չեզանից մեկն ինձ մատնելու է»: Բայց Մատթեոսն ասում է. Հուդան հարցնում է. «Ե՛ս եմ»: Հիսուսը պատասխանում է. «Դու ես ասում», որ նույն բանն է, թե «այո»: Հիսուսն ասում է. «Նրան, ում կտան հացի այս պատառը, մատնիչն է» (Մատթ. ԻԶ 23): Նա թաթախում է հացը (որն արեւելիցների համար զգալի տեղ էր ծառայում) ու տալիս է Հուդային: Սատանան մտնում է Հուդայի մեջ: Եվ Հիսուսն ավելացնում է. «Ինչ-որ անելու ես, արա շո՛ւտ»... Այո, Հիսուսը տեղյակ էր: «Հենց սկզբից» Նա գիտե, թե ում հետ գործ ունի: Նա Հուդայի մեջ հետեւել է չարի առաջխաղացմանը, որի մեսիական անհամբերությունը մեծանում է այնքանով, որքանով Հիսուսն իմանում է, որ իր կյանքը պիտի տա որպես զոհաբերություն: Եվ Հիսուսն ինքն է առաջ մղում Հուդայի գործը: Արդ, այստեղ Հիսուսն ու Հուդան հանդիպում են: Հուդան գործիք է, որ օգտագործում է Հիսուսը: Հիսուսը հրամայում է, Հուդան՝ հնազանդվում: Միայն թե մտադրություններն են տարբեր: ➔ էջ 6



# Վաթառնականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

← էջ 3, 4

Առօրյա, շարքային դեպքերի նկարագրությունը, բնական վիճակների ու հարաբերությունների ընտրությունը նրան մղում են աննշանը դարձնելու կարեւորություն ունեցող փաստ եւ իմաստ որոնելու դրա մեջ: Այդ սովորական, առօրյա վիճակների մեջ երբեմն իրենց արտացոլում են գտնում նաեւ ժամանակի որոշ հիմնահարցեր. այս տեսակետից առանձնանում են մի շարք պատմվածքներ, «Շոգ ամառ» վիպակը եւ «Խաղաղ գորանոցներ» վեպը: «Խաղաղ գորանոցներ» վեպում կյանքի իմաստը բացահայտվում է մի կողմից զինվորական կանոնագրքերի շրջանակներում ամփոփված հերոսի (Մուշեղ Յոսեփյան) վիճակով, մյուս կողմից՝ ազատ, անկաշկանդ օրերի մեջ դրսևորվող նրա երջանակը: Կանոնների եւ հրամանների համաձայն ապրող հերոսի եւ նրա ազատ հիշողությունների միջեւ թեւեւ չկա հակասություն, այնուամենայնիվ, ենթագիտակցորեն դրանք հակադրվում են, իսկ որպէս իրական գոյավիճակ՝ շարունակում ու լրացնում մեկը մյուսին: Վեպում սերը դառնում է այն հիմնական իմաստը, որով արժեքավորվում է հերոսի կյանքը: Վեպի վերջաբանն այդ արժեքավորված զգացումի եւ նրա կրողի միջեւ առաջացած խզումն է: Ավարտվում է մի հոգեվիճակ, եւ հերոսը կանգնում է իր իսկ ապրած օրերից դժվարությամբ հեռանալու անհրաժեշտության առջեւ: «Խաղաղ գորանոցներ» վեպում հեղինակն իր հերոսին ներկայացնում է իմանականում երկու կարեւոր ժամանակային-կենսական համագոյցներում. ներկան՝ գորանոցային կյանքը, եւ անցյալը՝ սիրո պատմությունը: Կա նաեւ ապագան՝ «Ծիչ» վերնագրով, սակայն դա ավելի շատ

ներկայանում է որպէս կառուցվածքային գործոն, քան իմաստային: Ներկա-անցյալ-ապագա եռյակն այս դեպքում դառնում է երեւոյթների տարածական ու ժամանակային որոշակի կապակցումներ ստեղծելու սկզբունք, տարբեր վիճակների համախմբման կարգ: Այս վեպն ավելի գրական փորձարարություն է, քան գեղարվեստի փաստ: Գրական թռիչքը դարձել է գետնաքարշ շարադրանք:

Ժամանակակից նյութի յուրացման եւ համապատասխան հերոսի կերպավորման իրենց ճանապարհներն են որոնում Վլադիմիր Զարուբյանը՝ «Արեւադարձ» վեպով, եւ Ալեքսան Մեխակյանը՝ «Այս ճանապարհը» վիպակով:

Վլադիմիր Զարուբյանն անդրադառնում է 1950-ականների երեւանին բնորոշ մի պատկերի, որն առնչվում է ուսումնից կտրված եւ մանր ու մեծ հանցագործությունների բովոյժ անցած երիտասարդության կյանքին: Վեպն ընդգրկում է ընտանեկան-ծնողական հարաբերությունների, միջավայրի ազդեցությունների, դատաքննչական գործողությունների, բանտային աշխարհի մի ճյուղավորված պատմություն, որի մեջ հեղինակի նպատակն է ցույց տալ կյանքի շավիղից սայթաքած անչափահաս հերոսի՝ Կարո Կարայանի աստիճանական հասունացման եւ փորձությունների ենթարկվելուց հետո կյանքում իր տեղը գտնելու հարցը: Զեղոսների այն շարքը, որ ներկայացվում է վեպում՝ տարբեր կարգի մեծ ու փոքր հանցագործներ կան ականա հանցագործներ, դատաքննչական մարմինների ազնիվ ու անազնիվ ներկայացուցիչներ, բանտի աշխատողներ, մաքուր ու առաքինի մարդիկ, իրենց մեջ կրում են




մեր հասարակության անցած մի տանամյակի պատկերը եւ իրենց հարաբերություններով, վարք ու բարքով ստեղծում մեր կյանքի բնորոշ մի շերտի պատմությունը: Զարուբյանը ստեղծում է այդ պատմությունը եւ մնում այդ պատմության մեջ՝ գեղարվեստական չափանիշերի առումով թույլ տալով մեղանշումներ, որոնք առնչվում են հերոսների հոգեբանական խորությամբ, դեպքերի տրամաբանությանն ու գրական վարպետությանը: Առաջադրված հարցերը մնացել են շարադրանքի աստիճանի, բարձր գրականության մասին խոսելու անտեղի է: «Անապատի օրերից մեկը» վիպակը Ալեքսան Մեխակյանի գրական հաջողություններից է: Վիպակը նվիրված է երեւանից Դազախստանի անապատները մեկնած ուսանողական շինարարական ջոկատներից մեկի աշխատանքային գործունեությանը: Զեղինակը կյանքի փորձի

թելադրանքով պատկերել է մարդկային հարաբերությունների այն կոշտ մթնոլորտը, ինչն ստեղծվում է հոգեբանական եւ բարոյական տարբեր նկարագիր ունեցող հերոսների միջեւ: Զետաքրքրական է նյութի մատուցման ձեւը: Ամբողջ վիպակը կարծես մի շնչում գրված մամակ լինի, որ գլխավոր հերոսը՝ աշխատանքային ջոկատի հրամանատարը, շարադրում է հեռվում՝ Երեւանում, մնացած կնոջ համար: Նամակի կամ հեռակա ինքնաբացահայտում-ինքնախոստովանություն ունեցող գրույցի ձեւից բխող անկեղծությունն էլ պայմանավորում է աշխատանքային նյութի եւ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող հերոսների ներկայացման հոգեբանական հիմքը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՊՐՅԱՆ  
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

## ՄԱՐԿ ԿՈՐՆԵՐ



← էջ 2, 5

Հիսուսը հրամայում է նվաստանալու համար: Հուդան հնազանդվում իր փառասիրությանը բավարարում տալու համար: Մեկը բարիք է ուզում, մյուսը՝ չարիք: Բայց այդ չարիքը, որ ենթարկված է բարուն, հանուն բարիքի է:

Այսպիսով՝ Հիսուսն է ամեն ինչ իր ձեռքում պահողը: Հուդան ուզում էր, որ ձերբակալությունը տեղի ունենար տոնակատարության ժամանակ: Բայց ահա Հուդան հայտնվում է որպէս գործիք Հիսուսի ձեռքին: Այսինքն՝ Հիսուսն է ինչն էլ ուզում, որ իր ձերբակալությունը տեղի ունենա Չատկի տոնակատարության ժամանակ... Ինքն է դա որոշել: Այդ դեպքում պիտի հարց տանք մեզ, թե ինչ էր Հիսուսի ուզածը՝ հրամայելով, որ իր ձերբակալությունը կատարվի հինգշաբթի երեկոյան տոնի ընթացքում:

իրեական Չատկի Նրա մահվանն իմաստ է հաղորդում: Դա կլինի երկրորդ ազատագրությունը, այս անգամ՝ վերջնական, իսկ առաջինը բանբեր-նշանն էր: Դա կլինի իսկական պաշտպանություն Բարձրալի գայրոյթից: Հիսուսի մահով բոլոր մարդիկ փրկվեցին Աստծո դատապարտությունից ու դատաստանից: Հիսուսի մահը փրկում է: Այն ազատագրում է ու քակում: Նա նրանց, ովքեր բանտված են մեղքերով, դարձնում է ազատ մարդիկ: Ահա ինչ է ուզում ասել Հիսուսը՝ մեռնելով տոնի ժամանակ:

Կարելի է ավելի ճշգրտել: Ըստ Հովհաննու Ավետարանի՝ Հիսուսը մեռավ ուրբաթ օրը, բայց այդ ուրբաթը դեռեւ Չատկի տոնի օրը չէր, այլ դրա նախապատրաստության: Հրեական տարվա առաջին՝ միսան ամսվա 14-ն էր, երբ կեսօրից սկսած քահանաները Չատկի գառներն էին մորթում

## ՀՈՒՂԱՆ

Տաճարի բակում: Արդ, ասում է Հովհաննեսի Ավետարանը. «Մինչ այդ նախապատրաստություններն արվում էին Տաճարում, դատարանի դահլիճում կատարվում էր մեկ այլ գոհաբերություն: Ու երբ գառների մորթն սկսվեց, Պիղատոսը Հիսուսին հանձնեց խաչելու (ԺԹ 16): Հիսուսը մեռնում է Գողգոթայում՝ գատակական մեծ մորթի ժամանակ: Սա նշանակում է, թե՛ են են, որ կատարում են, մեկընդմիջ, իսկական գոհաբերությունը: «Ահա Աստծո գառը, որ իր վրա է վերցնում աշխարհի մեղքը»,- բացականչում է Հովհաննես Մկրտիչը՝ Հիսուսի սպասավորության սկզբում (Ա 29): Որին Պողոսը պատասխանում է (Ա Կորնթ. Ե 7). «Քրիստոսը մեր Չատկին գոհվեց մեզ համար»:

Այս է եղել Հուդայի դերը: Նրա մատնությունը թույլ էր տալիս Հիսուսին ընդգծելու իր մահվան իմաստը, այն դեպքում ճշմարիտ լույսի տակ, ցուցադրելու դրա իրական արժեքը:

Ինքն էլ չիմանալով ու չուզեցնալով՝ Հուդան, իր փառատենչությամբ արբած, հիւսնային ծառայեց իր Ուսուցչի գործին:

«Ամեն բան նպաստում է նրանց բարությունը, ովքեր սիրում են Աստծուն», - ասում է առաքյալը (Հռոմ. Ը 28): Անգամ Հուդան, որը շարժվում էր չարի գործությամբ, աստվածային կամքն իրականացնողն է: Չարը շղթայված է, ու Աստված է, որ իր ձեռքում պահում է սանձերը. մեք կարող ենք իրձկանքով երգել. «Եթե Աստված մեզ համար է, ապա ո՞վ կլինի մեր դեմ... ոչինչ չի կարող մեզ բաժանել Աստծուց, որ հայտնվեց Հիսուս Քրիստոսում...»:

Մի հարց է մնում. եթե Աստված օգտվում է Հուդայից՝ իր նպատակներին հասնելու, ինչի՞ համար է այդ դեպքում Հիսուսի հեծեծանքը. «Վայ նրան, ում միջոցով մարդու Որդին պիտի մատնվի»:

«Այդ մարդու համար ավելի լավ կլիներ ծնված չլինելը» (Մատթ. ԻՋ 24)... Բայց նա հո չի խնդրել, որ լույս աշխարհ գա: Աստ-

ված է նրան բերել աշխարհ: Ուրեմն՝ Աստված անարարարացի ու դաժան բամ է անում՝ լույս աշխարհ բերելով մի մարդու, որպեսզի հետո օգտվի նրա չարագործությունից: Ո՛չ, ոչ մի տեղ Աստվածաշունչը Հուդային խաղալիք կամ խամաճիկ չի դարձնում: «Աստանային հնարավորություն մի տվեք», - ասում է Պողոսը Եփեսացիներին (Գ 27): Եթե սատանան մտել է Հուդայի սրտի մեջ, նշանակում է՝ Հուդան նրան թողել է, որ մտնի: Հուդայի գործը սահմանափակ պատասխանատվությամբ ձեռնարկ չէ: Հուդան ունակ է տարբերակելու եւ որոշելու: Հիսուսի բացականչությունն արտահայտում է իր ցավը, երբ Ինքը մտածում է, որ առաքյալը մի ընտրություն է կատարում, որը սխալ է, եւ որը նրան կարող է տանել միայն հուսահատության:

Քանզի Հուդան, որ միայնակ է իր դավաճանությամբ, միայնակ էլ կմնա դավաճանելուց հետո: Նա զղջում է, խոստովանում է, վերականգնում է: Բայց նա մնում է մեկուսի՝ իր վատ արարքով: Նա դեռեւս հույս է դնում իր սեփական ուժերի վրա: Արդ, իր ուժերն սպառված են: Միայն Քրիստոս կարող էր օգնել: Բայց Հուդան Նրա անունից չէ, որ զղջում է: Ահա ինչու զղջալն այս դեպքում համարժեք է հուսահատության:

Որպէս եզրափակում պիտի ասել, որ մեք գործնական դաս պիտի քաղենք այս ամենից. այն է՝ չպետք է լինենք միայնակ, իբր թե ինքնուրույն, չափից դուրս հպարտ մարդիկ ենք ու կարծենք, թե կարող ենք ինքներս միայնակ ապրել: Այդ գոռոզմտությունը Հուդային տարած դավաճանությանն ու կործանման: Կա խաբուսիկ անկախություն: Եթե Քրիստոսը մեր Չատկին է, մեք ավելի լավ բան չենք կարող ցանկալ, քան ամեն ինչում, մարմնով ու հոգով, կախյալ լինել Նրանից:

Ֆրանսերենից թարգմանությունը՝  
Գառնիկ ՄԵԼՆՈՅԱՆԻ

# ԵՐԲ ԵՂԵՂՆԵՐԸ ԿԱՆՈՒՆ ԵՆ



← էջ 4  
Ավելին՝ Ալաջաջյանի գրական ստեղծագործությունների մի մեծ մասն ուղղակի արտացոլանքն է հենց իր հայրական սերնդի ունեցած այդ տառապալից կյանքի:

Ալաջաջյանի համար հոր մտապատկերն ազգային ընդհանրացված խորհրդով է լեցուն, եւ եթե մի կողմից այն հինք է իր ժողովրդի ապրած ողբերգական դեպքերի բացահայտման համար, ապա մյուս կողմից արտացոլում է իր՝ որպես գրողի գաղափարական ու գեղարվեստական մտածողության անմիջական դրսևորումները: Կարելի է ասել, որ Ալաջաջյանի հայրը՝ որպես հույզ, զգայնություն ու գաղափարադրույթ, ներկա է այս վեպի ողջ շարադրանքում եւ ներառված է որոշ կերպարաբերտումներում (Արամի հոր, Թումասի եւ այլոց):

Վեպում հառնում է կրկնակի արծվաբերդ Ձեյթունը՝ իր հող ու ջրով, թափուտ անտառներով ու խորխորատ ձորերով, կապույտ երկնքով ու մինչեւ այդ երկինքը բարձրացող լեռնաշղթաներով եւ, մանավանդ, իր հերոսածին մարդկանցով, այն ամենով, որ կոչվում են ծննդավայր ու հայրենիք, հայ ու Յայաստան:

Յենց այդ ամենի սերն է, որ նորից դեպի հայրենի եզերք է բերել գաղթի ու տարագրման ճամփեքով անցած հայ մարդկանց, որոնք տեսել էին Դեր-Ձորի անապատները, կորցրել հարազատներին, բայց անմար

էին պահել հայրենի հողի կարոտը, խաղաղ կյանքի ու արարման երազանքները: Նրանք բոլորը եկել էին խաղաղ ու ստեղծարար աշխատանքի նվիրվելու համար, բայց ստիպված եղան ոչ թե մահ ու մուրճ, այլ զենք վերցնելու:

Վեպն արտացոլում է այդ մարդկանց կյանքի մի կարճ շրջան՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Կիլիկիա վերադարձած հայերի օրհասական կյանքը 1919–21 թթ. ընթացքում, որն ընդհատվեց ֆրանսիացիների ու քեմալականների միջև կնքված Կիլիկիան թուրքերին հանձնելու գաղտնի պայմանագրի գործադրման պատճառով՝ դրանով իսկ խափանելով Կիլիկիայի հայկական ինքնավար պետություն կազմավորելու ֆրանսիացիների «խոստումը»՝ մեկ անգամ եւս հաստատելով, որ մեծ տերությունները երբեք եւ ոչ մի պարագայում իրենց խոստումների տերը չեն մնում:

Այդ մարդկանց կյանքը լեցուն է անդառնալի ու անչափելի կորուստներով, շուրջբոլորը ողբ է ու կործանում, գետերից ելնող ողբ, ավերակներից ելնող ողբ, հողերի տակից լսվող ողբ, բայց կան նաեւ ցորենի հատիկի չափ ուրախություններ՝ հայրենի հողը, հրաշքով փրկված հարազատների

վերագտնումը, խաղաղ կյանք վերակերտելու հավատը, նախնիների գործը շարունակելու նվիրումը:

Հայրենի եզերք վերադարձի բաղձանքը հայ մարդու ամենակայուն ու տեսական հատկանիշներից մեկն է եղել ու մնում դարեր շարունակ, նրա մտածողությունն ու գործունեությունը ձեւավորող ուժերից մեկը, ոչ թե հոգեւոր, այլ իրական հայրենիքի գոյության պայմանը: Վերադառնալ նշանակում է հավատարիմ մնալ ինքդ քեզ, նշանակում է մասնակից լինել կառուցմանը, նշանակում է շարունակել մնալ հայ, նշանակում է... վրեժ լուծել նահատակվածների համար:

Ամերիկաներում հայտնված Համաստեղն իր պատմվածքներից մեկի հերոսի՝ Օվանի տղայի շուրթերով հայ մարդուն պատած հենց այդ հոգեմաշ ու կսկծալի բաղձանքի մասին էր խոսում, հեքիաթ այն գյուղի, որ Չայի կամուրջ ուներ, դեպի վանք տանող Ղողթար ճամփա... ճանչպար Թորո ու երեցփոխ Վարդան...

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

## «Գեւորգ Մարգարետունի» պատմավեպը...


← էջ 5  
Եթե Մուրացանի վեպի գաղափարական հենքն են կազմում հայրենիքի նկատմամբ սերը, անմնացորդ նվիրումը սեփական ընտանիքին ու ժողովրդին, ապա պետք է ասել, որ Դրասխանակերտցին մեծ տեղեկություններ չի տալիս Աշոտի ընտանիքի եւ այն սիրային կապի մասին, որն էլ առաջնային կարեւորություն է ունենում Մուրացանի համար: Որպես բարոյական եւ ամենավսեմ գաղափար՝ հայրենասիրությունը Մուրացանի պատմավեպում բացահայտված է իր ամենահոյակապ դրսևորումներով: Բայց Մուրացան գեղագետին հետաքրքրել է նաեւ ընտանիքի հարցը: Պատմավեպասանն անհարիր է համարել ոչ համատեղելի մարդկային թուլությունները՝ կարգախոսի մեծ ընդունելով ու հաստատելով. «Ձորավոր է այն ազգը, որ ունի գորավոր ընտանիքներ» դրույթը: Դրասխանակերտցին իր պատմության մեջ մի քանի անգամ է հիշատակում Սեւորդիքը եւ նրա իշխանին՝ Յիկ Ամրամին: Վերջինս Յիկ էր հորջորջվում իր ուժեղության համար եւ երկրի գործերի վրա հրամանատար էր կարգվել Աշոտ արքայի կողմից: Աշոտի եւ Յիկ Ամրամի կնոջ կապի մասին Դրասխանակերտցին մեզ ոչինչ չի հայտնել, սակայն նշում է, որ Ուտիքն անչափ սիրելի էր արքային. «Եվ Շահան կոչված շահը ետ է դառնում ու այնտեղից շարժվում գնում իր սիրած Ուտի գավառը» (321): Երկրում տեղի ունեցող անհաջողությունները, աղետներն ու դժբախտությունները կաթողիկոսը մեկնաբանում է որպես հայոց արքայի բողոքախոսության հետեւանք եւ հաճախ բարկանում արքայի՝ կենցաղում ունեցած բարոյական զանցառությունների, մանկական վարքի պատճառով: Ծանոթ լինելով այս փաստերին՝ Մուրացանը շողկապում է դրանք եւ ստեղծում սիրային այն հանգույցը, որը թվում է, թե բիծ է քաշում պատմավեպի գլխավոր կերպարներից մեկի՝ Աշոտ արքայի հայրենասիրության վրա: Աշոտի եւ Սեւորդից օրիորդի՝ Ասպրամի սիրո պատմությունը կրկին երեւան է գալիս դայակի եւ թագուհու խոսակցության ընթացքում. «Այնուհետեւ թագավորի այցելությունները Ուտիք կրկնվում էին հաճախ, դու ոչինչ չէիր կասկածում, բայց մենք, այսինքն՝ ծնողներդ Գարդանում, իսկ ես՝ արքունիքում, գրեթե հալումաշ էինք լինում: Վերջերում թագավորի այդ այցելություններն այնքան հաճախ կրկնվեցան, որ արքունիքի կանայք եւ նույնիսկ արքայի թիկնապահներն ասում էին, թե «թագավորը սիրահարվել է Սեւորդից աշխար-

հի վրա...» (61–62): Պատմության վերջին հատվածում Դրասխանակերտցին գրում է նաեւ Սեւանի ճակատամարտի մասին: Բշըր կամ Բեշիր գորավարը գորք է հավաքում եւ դուրս գալիս Մազազ գավառի կողմերը՝ վրեժխնդիր լինելու Շահան (Աշոտ) շահից: Շահը գտնվում էր Սեւանի կղզու ամրոցում, որի շնորհիվ էլ Բշըրը չի կարողանում գտնել նրան: Այստեղ առաջին անգամ Դրասխանակերտցին հիշատակում է Գեւորգ իշխանին. «Շահան կոչված շահի պատվավոր մարդկանցից Գեւորգ անունով մեկը ելել ու շրջում էր այն գավառներում թշնամի ավազակներից ամրացնելու երկրի սակավամասն բարեկարգությունը: Իսկ Բշըրը, երբ անսպասելիորեն դուրս է գալիս նրա դեմ, Գեւորգը իսկույն սարսափահար է լինում, որովհետեւ նրա հետ քսանից ավելի մարդ չկար, իսկ Բշըրինը մոտավորապես հազար մարդ էր: Սակայն Տիրոջ վրա հույս դնելով՝ (Գեւորգը) սպասում էր նրանց հաղթելու հույսով: Եվ ապա քաջապնդված եւ սրտասպնդված՝ (նա) ձի է հեծնում եւ արիաբար գորհելով նրանց դեմ՝ շատերին թավալզոր է անում... Եվ ապա մեծակ կռվելով ամբողջ գորքի դեմ՝ նա մախ սրով ջարդուհիշուր է անում Բշըրի երկվարը, այնպես, որ նա հագիվ մի այլ ձի նստելով փախչում է» (355–356), 921 (923) թ.: Սեւանի ճակատամարտից հետո, Դրասխանակերտցին այլեւս պատմական ոչ մի տեղեկություն չի հաղորդում: Նա իր պատմությունն ավարտում է կոչով, հորդորով՝ ուղղված հայոց նախարարներին, իշխաններին, արքաներին, մեծամեծներին՝ լինել միմյանց հավատարիմ, միաբան լինել եւ այդպիսով գետին տապալել բոլոր թշնամիներին: Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» մի ահռելի չափով ապահովում է Մուրացանի վեպի պատմական ճշմարտությունը:

Տասներորդ դարի Հայաստանի լիարժեք նկարագիրը տալու համար երկրորդ կարեւորագույն սկզբնաղբյուր է համարվում Թովմա Արծրունու եւ Անանունի «Արծրունյաց տան պատմություն» աշխատությունը: Յեղիակները, լինելով իրենց դարի հարագատ զավակները, բնականաբար չէին կարող անհաղորդ մնալ ժամանակի գերիշխող միտումներին:

Արծրունիների նախարարական տոհմը եղել է հայոց նշանավոր նախարարական տներից մեկը բոլոր ժամանակներում: IX դարում Բագրատունյաց Հայաստանի զարգացմանը զուգահեռ մեծ հաջողություններ են գրանցում նաեւ Արծրունիները: Երբեմն միջիշխանական տարածայնություններ են եղել Բագրատունիների, Արծրունիների

ու եւ Սյունիների միջև, որոնք ստացել են տարբեր լուծումներ: Բագրատունյաց եւ Սյունյաց նախարարական տներից հետո Արծրունիներն զբաղեցնում էին 3-րդ տեղը: Նրանք՝ որպես ինքնուրույն իշխանական տոհմ, ունեին իրենց գորքը, հարկային համակարգը, դատավարական իշխանությունը: Լինելով այս ժամանակաշրջանի զավակ՝ Թովման եւ Անանունը ստանձնում են իրենց տոհմական պատմությունը գրելու հայրենամարտ գործը: Թովմա Արծրունու մասին եղած կենսագրական տվյալներն աղբատիկ են: Դատելով մի քանի փաստերից՝ կարող ենք ենթադրել, որ նա եղել է ազդեցիկ հոգեւորական, հմուտ աստվածաբան, որը ծանոթ է եղել ոչ միայն Հայաստանի, այլեւ հարեւան երկրների պատմությանը, հատկապես աստվածաբանությանը: Իր Պատմության բովանդակությունից կարող ենք եզրակացնել, որ Թովման եղել է 850-ական թվականներին տեղի ունեցած անցքերի ժամանակակիցը: Թովմա Արծրունին ժամանակակիցն է Հովհաննես Դրասխանակերտցի պատմագիր-կաթողիկոսի: Իր Պատմության մեջ Թովման հիշում է Հովհաննես կաթողիկոսին, նրան հորջորջում «երանելի» ածականով, թեւեւ ոչ մի ակնարկ չի անում Դրասխանակերտցու Պատմության վերաբերյալ. «Հայրապետական աթոռը ժառանգեց երանելի տեր Հովհաննեսը, որը աճել էւ ուսում էր առել սուրբ Մաշտոցի մոտ, նրանից հրահանգվող կրթարանում ուսմամբ լցվել, քաղցրաբար եւ հեզահայաց այր էր, միշտ իրեն հասարակ էր կարծում, հեռու էր ամբարտապան բարձրահոնությունից, մնում էր հեզերի աստիճանին, դրվատվելով մեր փրկչից՝ Հիսուս Արարչի» (Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985, էջ 377: Այսուհետ այս հրատարակությունից արված միջբերումների պարագայում կնշվեն միայն «Թ» տառը եւ էջահամարը): Թովմա Արծրունին, իր իսկ վկայությամբ, պատմությունն սկսել է գրել Վասպուրական



նի իշխանապետ Դերենիկ Արծրունու օրոք եւ նրա հրամանով՝ հավանաբար 876–877 թվականներից սկսած: Որպես իր երկի պատվիրատուները՝ Թովմա Արծրունին հիշում է Դերենիկ եւ Գագիկ Արծրունիներին, որոնց նա համարում է ոչ միայն պետական գործիչներ, այլեւ հմուտ ուսումնասերներ: Պատմիչը խալիֆայության բռնակալության դեմ ժողովրդի հերոսական ոգորումների ժամանակակիցն է, ուստի նրա մտահայեցողությունն ավելի աշխարհիկ է: Թովմա

Արծրունին դեպքերի շարադրանքը հասցնում է մինչեւ 906 թվականը:

Պատմությունը գրելու հիմնական շարժառիթը համարվել է Արծրունյաց տան գովերգումը: Իր երկի առաջաբանում մատնագիրը Դերենիկ Արծրունուն խոստանում է, որ գրելու է Արծրունիների տոհմաբանությունը: Սակայն Թովմա Արծրունին ավելի ընդարձակ պատմություն է գրում՝ անդրադառնալով ոչ միայն Վասպուրականի, այլեւ ողջ Հայաստանի պատմությանը: Թ. Արծրունին իր Պատմության մեջ չի անտեսում նաեւ դրացի ժողովուրդներին: Պատմագիրն առաջաբանում հավաստիացնում է, որ գրելու է առավել կարեւոր ու հետաքրքիր անցքերի մասին: Միջնադարի այս ժամանակահատվածում Արծրունի իշխանները երեւան են բերում կենտրոնախույս միտումներ: Սակայն պետք է նշել, որ տոհմն ունեցել է նաեւ հայրենամարտ գործիչներ: Թովմա Արծրունին եղել է անաչառ եւ ցույց է տվել իր բացասական վերաբերմունքը կենտրոնախույս ուժերի նկատմամբ: Արծրունու Պատմության շնորհիվ հայ պատմագրությունն ունի սեփական սկզբնաղբյուրներ, որոնք ներկայացնում են 851–852 թվականներին արաբական խալիֆայության դեմ հայերի մղած հերոսական պայքարի դրվագները: Կարելի է ենթադրել, որ պատմիչը (հիարկե, որպես հոգեւորական) մասնակցել է այդ շարժմանը:

Շարունակելի

Սամվել ԵՂԻՎԱՐՅԱՆ



# Տոփի. Թումանյանի հանրային գործունեության շուրջ... (Վավերագրերի նոր ժողովածու)



Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150-ամյակի առիթով մեզանում բազմաշերտ ու բազմաձև գրականություն տպագրվեց: Չնայած այն հանգամանքին, որ Յոփի. Թումանյանը հայ իրականության մեջ առավել շատ ուսումնասիրված գրողներից է, եւ նրա գրական ստեղծագործության եւ հանրային գործունեության մասին շատ է գրվել, այնուամենայնիվ, հետազոտություններն այդ առումով շարունակական են:

Թումանյանի ազգային, քաղաքական եւ հասարակական գործունեության վերաբերյալ նորահայտ փաստաթղթերի ժողովածու է հրատարակել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը: «Մեսրոպ Արք. Աշճեան» մատենաշարով լույս տեսած «Յոփիաններ Թումանյան. նորահայտ փաստաթղթեր» ժողովածուի կազմողը, առաջաբանի եւ ծանոթագրությունների հեղինակը պատմագիտության թեկնածու, դոցենտ Համո Սուքիասյանն է, խմբագիրը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Պետք է նշել, որ երիտասարդ ու խոստումնալից պատմաբան Հ. Սուքիասյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում իր կայուն տեղն ունի Թումանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, եւ սույն թեմատիկայով նա շարունակ գրում եւ բանախոսում է:

Անշուշտ, ամենայն հայոց բանաստեղծի հանդեպ տածած անսահման սիրո եւ պաշտամունքի զգացումն է ստիպել երիտասարդ գիտնականին իր մասնագիտական գործունեությանը զուգահեռ զբաղվել նաեւ թումանյանագիտության եւ այդ առումով էլ բավական բեղուն արդյունքներ արձանագրել: Նորահայտ փաստաթղթերի այս ժողովածուում ընդգրկված են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահպանվող մի շարք նյութեր, որոնք վերաբերում են բանաստեղծի հասարակական բազմաշերտ գործունեությանը, ինչպես նաեւ նրա ծննդյան հիմնամյակի եւ վաթսուամյակի տոնակատարություններին, ստեղծագործությունների հետմահու տպագրությանը, տարածմանն ու մասսայականացմանը, գնահատմանը:

Ժամանակագրական առումով դրանք վերաբերում են 1918-ից 1929 թվականներին: Վերոնշյալ փաստաթղթերը լրացնում են բանաստեղծի երկերի լիակատար ժողովածուում (ԵԼԺ) հրատարակված վավերագրերի տեղեկությունները՝ նոր դրվագներ ու մանրամասներ բացահայտելով նրա հանրագիտ գործունեության վերաբերյալ:

Փաստաթղթերն ընտրված են Հայաստանի ազգային արխիվի տարբեր ֆոնդերից եւ հրատարակված են բնագրային տեսքով: Հեղինակը կատարել է կետադրական եւ ուղղագրական անհրաժեշտ շտկումներ եւ ծանոթագրություններ: Հիշատակվել են նաեւ փաստաթղթերի նախորդ հրատարակությունները (վերջինների առկայության դեպքում):

Փաստաթղթերը վկայում են, թե որքան ծանրակշիռ դերակատարություն է ունեցել մեծ բանաստեղծը 1918–1920 թվականների հայ իրականության տարբեր ոլորտներում:

Հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ նրա բացառիկ զգայուն եւ սրված պատասխանատվության զգացումն ամերկբա տեսանելի է հանրային տարբեր խորհրդակցություններում ու ժողովներում ունեցած ելույթներից, գրավոր կարգադրություններից:

Թումանյանի խորին անհանգստությունն ու մտահոգությունները հանրային կյանքի մեծ ու փոքր երեսույթների առնչությամբ զգացվում են յուրաքանչյուր փաստաթղթից:

Սակայն այդ ամենի մեջ, իհարկե, բանաստեղծի օրավուր աճող մեծագույն տագնապն է երկրի եւ ժողովրդի վաղվա օրվա հանդեպ: Հայ որեւէ անհատի պարագայում գուցե դա այդպես անկեղծ ու բնական չի արտահայտվում, ինչպես Թումանյանի դեպքում է:

Այսպես՝ 1918 թ. հունիսի 24-ին կայացած հայոց ազգային խորհրդի միտումնաբանական ստեղծված իրավիճակի կապակցությամբ հետեւյալն է նշել. «Կառավարութիւնը պէտք է երկրում լինի, կտրված է երկիրը: ...հրաւումընով թէ՛ ուժով եք կառավարութիւն կազմելու... Դրութիւնը լուրջ է, պէտք է գնալ, տէր դառնալ եւ կառավարել երկիրը: Եթէ կառավարութիւն չլինի, շատ բան այսպէս չի լինի» (էջ 14–15):

Բանաստեղծի եւ ազգային գործչի առողջ բնազդն ու իմաստնությունը, հեռատեսությունը զգացվում են ամեն ինչում:

1919 թ. դեկտեմբերին բռնկվեց հայ-վրացական պատերազմը, որը խոր մտահոգություն պատճառեց բանաստեղծին: Գրքում ներկայացված է Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի (մախագահ՝ Յոփի. Թումանյան) կազմած փաստաթուղթը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ հայ-վրացական պատերազմին վերջ դնելու հարցով: Այդ փաստաթուղթն ուսանելի է մի շարք առումներով: Նրանում ընդգծում է, որ իհարկե ու ազգակից ժողովուրդների միջեւ առաջ եկած եղբայրասպան պատերազմը հոյի է սարսափելի ծանր ու կործանարար հետեւանքներով, որը չէղած ու չտեսնված ոճիր է երկու ժողովուրդների խաղաղ համակեցության եւ խղճմտանքի դեմ: Ուստի որոշվում է բռն կերպով բողոքել կատարվող արյունահեղության դեմ, պահանջել անմիջապես դադարեցնել թշնամական գործողությունները, ընդհարման պատճառները վերացնելու համար անմիջապես գումարել հայ-վրացական կոնֆերանս, որի իրավասությանը հանձնել նաեւ մյուս վիճելի հարցերը:

Այնուհետեւ առաջարկվում է. «տրամադրել երկու կառավարութիւններին խորհրդիսլայն աջակցութիւնը՝ վերոյիշեալ նպատակ-

ներին հասնելու համար եւ այս որոշումը յայտնել երկու կառավարութիւններին, երկու ժողովուրդների ազգային-հասարակական հիմնարկութիւններին եւ ամէն կերպ տարածել այդ ժողովուրդների ամենալայն խաւերի մէջ» (էջ 37):

Հարեւան եւ բարեկամ վրաց ժողովրդի հանդեպ բանաստեղծի հարգանքի ու պատկառանքի զգացումն արտահայտվել է նաեւ այլ առիթներով:

Ահա այսպես՝ 1920 թ. ապրիլի 30-ին Թումանյանի գլխավորած Հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը հրավեր է ուղարկում հայկական մշակութային հաստատություններին՝ մասնակցելու առաջիկայում (մայիսի 7-ին) նախանշված Կրաստանի բանաստեղծության եւ գրականության ազգային տոնին. «Հայ գրողների վարչութիւնը եւ Հայ հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհուրդը որոշել են մասնակցել այդ տոնակատարութեան՝ հրաւիրելով նաեւ մեր կուլտուրական հաստատութիւններին միանալու իրենց հետ» (էջ 60):

Մի քանի փաստաթղթեր վավերագրում են Թումանյանի կարեւոր դերակատարությունը Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադիր համագումարի եւ կոմիտեի գործունեության գործառնություններում (էջ 64–75):

Ժողովածուի վերջին բաժինը եզրափակում է այն նյութերն ու վավերագրերը, որոնք վերաբերում են բանաստեղծի 60-ա-

րիելոգիան ռեակցիոն է եւ ուտոպիստական: Այդ բնույթով պիտի մոտենալ Թումանյանին եւ զեկուցումներ կազմակերպել» (էջ 91):

Ժողովածուում ընդգրկված են հետաքրքիր ուրիշ այլ նյութեր, օրինակ՝ գրականագետ Նորայր Դաբաղյանի պատրաստած թեզիսները՝ Յոփի. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքի մասին: Այնտեղ կրկին նկատվում է, որ մեծ բանաստեղծի հանդեպ կա պրոլետարական կամ դասակարգային մոտեցման ընդգծված արտահայտություն: «Յոփիաններ Թումանյանը, վերոհիշյալ հասարակական-քաղաքական պայմաններում հանդես գալով, ենթակա է լինում բուրժուական մացիոնալիզմի ազդեցությանը ու իր հասարակական-քաղաքական գործունեությունը ծավալում է այդ զարգացող սոցիալական ազդեցության տակ:

...Նոյեմբերյան հեղափոխությունից հետո Յոփիաններ Թումանյանը հայ մանր բուրժուական ինտելիգենցիայից առաջինն է լինում, որ ընդունում է խորհրդային իշխանությունը, իհարկե, յուրահատուկ մոտեցումով» (էջ 100):

Այսպիսով՝ ինչպես ակներեւ է շարադրանքից, «Յոփիաններ Թումանյան. նորահայտ փաստաթղթեր» արխիվային վավերագրերի ժողովածուում բավական նորություններ է պարունակում եւ օգտակար կարող է լինել ոչ միայն թումանյա-



նյա տարեդարձը կազմակերպող եւ ոգեկոչող հանձնաժողովի աշխատանքներին:

Վերոհիշյալ հանձնաժողովի միատերի արձանագրություններն ու բազմապիսի այլ նյութեր վկայում են, որ խորհրդային Հայաստանի իշխանությունները պատշաճ կերպով են նախապատրաստվել ամենայն հայոց բանաստեղծի հոբելյանն արժանավորապես ոգեկոչելուն (փաստաթղթերում առկա որոշ նրբերանգներ, այնուամենայնիվ, վկայում են, որ ամզամ հոբելյանական հանդիսություններում կոմունիստական գաղափարախոսները չեն մոռանում իրենց բնորոշ ու հարկ եղած զուշույթները ցուցաբերել):

Օրինակ՝ ասվածի ցայտում ապացույց է ՀԽՍՀ լուսժողկոմատի քաղլուսգլխավորության գրությունը Երեւանի լուսբաժնին՝ Յոփի. Թումանյանի 60-ամյակի առթիվ քաղլուստեսույցների անելիքների մասին, որում մասնավորապես նշված է հետեւյալը. «Թումանյանը մեր հին գրականության մեջ ամենախոշոր բանաստեղծն է: Նրա տարբերությունը Հ. Պարոնյանից եւ հայկական մացիոնալիզմի մյուս երգիչներից այն է, որ նա խոշոր չափով իր գրիչն ուղղում է գյուղական ցեղերի դեմ: Իհարկե, այդ չի նշանակում, որ նա ազգայնական չի. Թումանյանը միաժամանակ մացիոնալիստ է: Թումանյանը մեզ համար ընդունելի է այնքանով, որքան որ նա քննադատում է տիրող դասակարգերը: Սակայն Թումանյանի

նագիտությամբ զբաղվողների, այլեւ այդ դարաշրջանի հայ հասարակական, գրական-մշակութային եւ քաղաքական մտքի ուսումնասիրման համար:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ**  
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**  
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**  
Աստղիկ Ստամբուլյան

**Գրանցման վկայական՝ 624**  
**Խմբագրության հասցեն՝**  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հեռախոս՝ (010) 517 280**  
**Էլ. փոստ՝** qristhay@etchmiadzin.am  
astghikstam@gmail.com

**web կայք՝**  
**krishayas.wordpress.com**  
Ստոր. տպագր. 2.16.2022 թ.

**Տպաքանակը՝ 1225**